

Բույսերով, բուսական թույներով թունավորման ձեվերը

Կենցաղային

- պատահական- թունավոր բույսերի խառնուրդ պարունակող սննդային նշանակության բույսեր օգտագործելիս, թունավոր բույսերով սնված կենդանիների մսից, մեղրից՝ թունավոր բույսերից հավաքված)
- անզգուշություն- բուսական հումքերով ինքնաբուժման ,սննդամթերքը առանց նախնական մշակման ենթարկելու(հումակերություն) դեպքում
- քրեածին նպատակով և այլն

Մասնագիտական

- բնափայտի մշակման ժամանակ (խեժափիճու, լաստենու, կաղնու, սոճու մշակման ժամանակ , առաջանում են մաշկի և լորձաթաղանթի ախտահարումներ)
- դեղաբուսական հումք մթերելիս և մշակելիս
- թունավոր բույսեր աճեցնելիս

Դեղորայքային

- բուսական ծագման պատրաստուկների գերդոզավորման դեպքում
- բժշկական հսկողության բացակայության դեպքում և այլն

Թունավորման կանխարգելումը

1. Երբեք չփորձել, մաշկի վրա չտրորել այն բույսերը, որոնց անվտանգության վերաբերյալ հստակ համոզված չեք, վերացնել այդ սովորությունը երեխաների մոտ
2. Տանը պահվող յուրաքանչյուր դեղ (թուրմ, էքստրակտ, մանրեցված բուսական հումք) պետք է պիտակավորված լինի և պետք է պահվի երեխաներից հեռու

Թունավորման առաջին օգնության կազմակերպումը

- Բույսի մնացորդների հեռացում ստամոքսից (փսխման արհեստական առաջացում որոշակի բացառություններով, ստամոքսի լվացում զոնդի միջոցով)
- որոշ դեպքերում՝ օրինակ, կակաչով թունավորման դեպքում փսխեցնող միջոցները արդյունավետ չեն, իսկ շիկատակի, արջընկույզի, բանգիի դեպքում՝ արհեստական փսխում հնարավոր չէ առաջացնել:
- սրտային գլիկոզիդներ պարունակող բույսերով (հովտաշուշան, դափնեվարդ , ադոնիս) թունավորման դեպքում արհեստական փսխում չի կարելի առաջացնել: Նման դեպքում պետք է կուլ տալու նպատակով տուժածին սառցե փոքրիկ կտորներ տալ և կատարել ստամոքսի լվացում ` նախապես մակերեսից բուսական յուղով պատված զոնդի միջոցով:
- Ադսորբենտների ընդունում՝ թույնի ներծծումը կանխելու նպատակով (ակտիվ ածուխ, տանինի 0,1 % լուծույթ, վուշի սերմերի լորձ, օսլայե կիսել): Այս միջոցները ձեռքի տակ չունենալու դեպքում կարելի է թունավորվածին տալ 2-3 ձվի սպիտակուց՝ 300-500գ կաթի հետ խառնված /գիհու պտուղներով , կամ պտերի կոճղարմատով թունավորման դեպքում կաթ չի կարելի տալ/:
- Աղիների մաքրում (որոշ բացառություններով լուծողականների կիրառում՝ 25-30գ. նատրիումի կամ մագնեզիումի սուլֆատը ` 2-3 բաժակ ջրում): Աղեստամոքսային սուր արտահայտված երևույթների դեպքում բացառել լուծողականները:
- Շնչառության թուլացման դեպքում կատարել արհեստական շնչառություն (քթին մոտեցնել անուշադրի կաթիլներ)
- Մաշկը վնասվելու դեպքում մի քանի անգամ լվանալ ջրով (օճառով, 2% կալիումի պերմանգանատի լուծույթով)

- Անոթազարկի թուլացման դեպքում տալ սուրճ կամ թեյ

1

Belladonna caucasica
Красавка кавказская
 Կովկասյան մահամորմ

Հանդիպում է Հայաստանի հյուսիսային և հարավային շրջաններում՝ կաղնու և հաճարենու անտառներում:

Թունավոր է ամբողջ բույսը և հատկապես՝ պտուղները: Պարունակում է ալկալոիդներ՝ հիսցիամին, որը անջատելիս փոխվում է ռացեմիկ ձևի՝ աստրոպինի:

Թունավորման ախտանիշները

- Մաշկի, լորձաթաղանթների չորություն, ցանավորում, կարմրություն
- Ձայնի կորուստ
- Կլլման ակտի խանգարում
- Ծարավ, սրտխառնոց /առանց փսխումի/
- Աղիների ատոնիա, միզակապություն
- ԿՆՀ-ի դրդում, ագրեսիվություն, գառանցանք, հալյուցիկացիաներ

Մահամորմի տերևներով թունավորվելիս դիագնոստիկ նշանակություն ունի մեթիլէսկուլին գլիկոզիդը , որը թունավորման ժամանակ անցնում է արտաթորանքի մեջ և կարելի է հայտնաբերել վերջինիս սպիրտային մզվածքին ամոնիակի կաթիլ ավելացնելիս (առաջացնում է ինտենսիվ լուսարձակում՝ ֆլուրեսցենցիա):

Hyoscyamus niger
Белена черная
 Մեվ Մոլեխինդ (Բանգի

Հանդիպում է Զանգեզուրում, Շիրակում, Վայքում : Բույսի բոլոր մասերը պարունակում են հիոսցիամին և սկոպոլամին ալկալոիդներ:
Բանգիի արմատները սպիտակ են , հյութալի, նման են մաղադանոսի, ստեպղինի արմատներին :

Թունավորման ախտանիշները

- Բերրի լայնացում, տեսողության վատթարացում
- Լուսավախություն
- Տազնապ, գիտակցության մթազնում, զառանցանք, հալյուցինացիաներ
- Միզարձակություն
- Տախիկարդիա, արյան ճնշման անկում

Datura stramonium

Дурман обыкновенный

Արջընկույզ սովորական

Հանդիպում է Հայաստանի ամբողջ տարածքում և Արցախում: Թունավոր է ամբողջ բույսը: Երեխաներն առավել ծանր թունավորվում են սերմերով: Բույսը պարունակում է հիոսցիամին և սկոպոլամին ալկալոիդներ:

Թունավորման ախտանիշները նույնն են , ինչ և բանգիի դեպքում:

Aconitum nasutum

Аконит (Борец) носатый

Քթեղ ընձախոտ /Ակոնիտ/

Հանդիպում է ալպիական մարգագետիններում՝ Սպիտակում, Իջևանում, Վայքում, Մեղրիում, Արցախում: Առավել թունավոր է ծաղկման փուլում: Թունավորությունը պայմանավորված է աթիզինի շարքի ալկալոիդներով՝ մասնավորապես, սկոնիտինով, որի մահացու դեղաչափը՝ 0,002-0,004գ.:

Թունավորման ախտանիշները

Բերի նեղացում, հետո լայնացում, տեսողության մթագնում, մկանային ֆիբրիլյացիաներ, վերջույթների մկանային ցնցումներ, մաշկա-ցավային զգացողության կորուստ, շնչական կենտրոնի կաթված:

Peganum harmala

Могильник обыкновенный, Гармала

Սպանդ սովորական, Հարմալ

Լայնորեն տարածված է Հոկտեմբերյանում, Արտաշատում, Վայքում, Արցախում:

Թունավոր է բույսը, հատկապես սերմերը և արմատները:

Անունը ծագել է ,,,, անունից, որը նշանատվում է սրբազան: Համարվել է հին

Ժամանակներից պաշտամունքային բույս Հնդկաստանում, Իրանում և Հայաստանում:

Բույսի սերմերը ունեն շմեցնող ազդեցություն: Արևելքում կիրառվել է հոգեկան

հիվանդների և սուրբ հիվանդությամբ՝ էպիլեպսիայով տառապողների բուժման

նպատակով: Պարունակում է խինազոլինի շարքի /պեգանին/ և ինդոլի շարքի

/հարմին, հարմալին/ ալկալոիդներ:

Գիտական բժշկության մեջ կիրառվում է պեգանինը՝ որպես հակախոլին

էսթերազային:

Թունավորվում են , երբ ինքնաբուժման նպատակով կիրառում են սերմերը և խոտը:

Թունավորման ախտանիշները

ԿՆՀ-ի դրդում, ինքնահսկողության կորուստ, հալյուցինացիաներ, դեպրեսիա, զարկերակային ճնշման բարձրացում, շնչական կենտրոնի ընկճում, կաթված:

Punica granatum L.

նռնենի

гранатовое дерево

Punicaceae

Նոնազգիներ

Гранатовые

Թունավոր են համարվում մոռենու արմատների, ճյուղերի, բների կեղևը, որոնցում պարունակվում է թունավոր հեղուկ պելլետիերին նյութը և նրա ածանցյալները:

Թունավորման ախտանիշները գլխացավ,

գլխապտույտ, փսխում, դիարեա, սրունքի մկանների ցնցումներ, բերի լայնացում, տեսողության վատացում, ընդհանուր թուլություն, ծանր դեպքերում՝ շնչական կենտրոնի կաթված:

Conium maculatum L.

Գինեգոխ պիսակավոր

Болиголов пятнистый

Տարածված է Ստեփանավանի, Թումանյանի, Սպիտակի, Վայքի անտառային շրջաններում: Ամբողջ բույսը թունավոր է, հատկապես՝ պտուղները: Էմպիրիկ բժշկության մեջ հաճախ ինքնաբուժման նպատակով /որպես ցավազրկող, հանգստացնող, հակացնցումային/ կիրառում են տերևները:

Թունավոր հատկությունները պայմանավորված են կոնիին /նիկոտինա –

կուրարենման/ազդեցություն/ չափազանց թունավոր ալկալոիդներով:

Մահացու դեղաչափը՝ 0,15գ.